

ՀԱՂՈՐԴՈՒՄ REPORT СООБЩЕНИЕ

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

2021 թ. նոյեմբերի 3-ին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին ընդառաջ մեկնարկեցին Իրանի մշակույթի օրեր: Հայ-իրանական քաղաքական և պատմամշակութային առնչությունները դարավոր պատմություն ունեն: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են հարյուրավոր պարսկերեն ձեռագրեր և վավերագրեր, որոնք առավել ակնառու են դարձնում երկու ժողովուրդների հինավուրց կապերը: Իրանական հավաքածուն ոչ միայն ամենահարուստներից է Մատենադարանի օտարալեզու ձեռագրերի շարքում, այլև գտնվում է ուսումնասիրման և վերականգնման աշխատանքների առաջնահերթությունների շարքում:

Մատենադարանը նախաձեռնել է «Ղաջարական դարաշրջանի ձեռագրակազմերի վերականգնման» դասընթացներ: Ծրագրի շրջանակում ձեռագրերի վերականգնման առաջատար մասնագետ Համիդ Մալեքյանը դասեր անցկացրեց Մատենադարանի վերականգնողական բաժնի մասնագետների հետ, ինչի արդյունքում շուրջ տասը արժեքավոր ձեռագիր կվերանորոգվի առանձնահատուկ տեխնիկայով: Նախագիծն իրականացվում է ՀՀ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի հետ համագործակցության շրջանակում՝ Արա Փլիպոսյանի օժանդակությամբ: Հայ-իրանական օրերի շրջանակում Մատենադարանում տեղի ունեցավ Քրիստինե Կոստիկյանի «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» գրքի շնորհանդեսը: Բացվեց Ղաջարական դարաշրջանի մշակույթին նվիրված ցուցադրություն, և ներկայացվեց Իվեթ Թաջարյանի «Ղաջարական արվեստի նմուշները Մատենադարանում» ալբոմը:

Ինքնատիպ ձեռագրեր ու մանրանկարներ, խեժապատ կազմեր, կիրառական արվեստի նմուշներ, հրովարտակներ, բացառիկ լուսանկարներ: Այս և այլ ուշագրավ ցուցանմուշներ ներկայացվեցին Իրանի Ղաջարական շրջանի արվեստին նվիրված ցուցադրության ընթացքում:

Մատենադարանում պահվում է 2730 արաբատառ ձեռագիր (արաբերեն, պարսկերեն, օսմաներեն): Արաբատառ հավաքածուի պարսկերեն 450 ձեռագրերից մոտ 150-ը Ղաջարական ժամանակաշրջանից են:

Ղաջարական թագավորությունը (1794-1925 թթ.) հիմնել է թյուրքական ղաջար ցեղի առաջնորդ Աղա Մուհամմեդ Խան Ղաջարը (1794-1797 թթ.): Նրա ու հաջորդների օրոք եվրոպայի հետ ակտիվ հարաբերությունների հաստատման ազդեցությամբ, մեծ փոփոխություններ են լինում իրանական արվեստում:

Ղաջարական շրջանի արվեստը մասնագետները երկու փուլի են բաժանում. առաջին փուլում նկարիչները գտնվում էին եվրոպական արվեստի մեծ ազդեցության տակ, գերիշխում էին խաչտաբղետ գույներն ու նոր պատկերամտածողությունը, սակայն նկարիչները ձգտում էին համադրել նորը ավանդականի հետ: Երկրորդ փուլում արդեն ջրաներկին փոխարինելու եկան յուղաներկն ու հաստոցային կտավները:

Այդ շրջանի արվեստը կոչվում է «Արքունական», քանի որ հիմնական պատվիրատուն արքունիքն էր: Տիրակալներն ու ազնվականներն էին թելադրում նաև ճաշակ ու ոճ: Սա արտահայտվում էր հատկապես նկարներում առկա աշխարհիկ, բանահյուսական թեմաների ու մարդկանց կերպարների առկայությամբ: Այս գործերը իհարկե դուրս չէին գալիս արքունիքից, քանի որ մարդկանց պատկերելը դեմ էր Իսլամի սկզբունքներին:

Ղաջարական ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքում և արվեստում մեծ է իրանահայերի ներդրումը: Աչքի ընկած քաղաքական, հասարակական ու մշակութային հայտնի գործիչներից կարելի է հիշել դիվանագետ, գրող, հրապարակախոս Միրզա Մելքոմ խանին (Հովսեփ Մելքոմյան), ակնագործ Մերունի Մասեհյանին, քաղաքական գործիչ ու թարգմանիչ Հովհաննես խան Մասեհյանին և այլոց:

Մուհամմեդ շահ Ղաջարի օրոք՝ 1844 թվականին Իրան է մուտք գործում լուսանկարչությունը, որը մեծ զարգացում է գտնում այս շահի ու նրա հաջորդների օրոք: Իրանում գեղարվեստական լուսանկարչության զարգացման գործում նշանակալի է Անթուան Սևրուգինի (1851-1933 թթ.) գործունեությունը: Թեհրանահայ ազնվականների ընտանիքից սերող լուսանկարչի աշխատանքներում կարող ենք տեսնել այդ դարաշրջանի իրանական կյանքի ընդգրկուն պատկերը:

Մատենադարանի Ղաջարական հավաքածուի մեջ հատուկ ուշադրության է արժանի հայկական թեմաներով մի խեժապատ կազմ: Կազմի առաջին փեղկին պատկերված է Մովսես Խորենացու պատմությունից հայտնի «Արա Գեղեցիկի և Շամիրամի» առասպելից մի դրվագ՝ «Արայ գեղեցիկ», «Կարդոս եւ Շամիրամ» գրություններով: Երկրորդ փեղկին՝ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» հայտնի Ջիրավի ճակատամարտից մի տեսարան է՝ «Մուշեղ սպարապետ հայոց» գրությամբ:

Այս ուշագրավ նյութերը ամփոփված են Մատենադարանի գիտաշխատող Իվեթ Թաջարյանի «Մատենադարանի Ղաջարական արվեստի նմուշները» եռալեզու ալբոմում, որը լույս է ընծայել Մատենադարանի հրատարակչությունը 2021 թվականին՝ «Վիկտորիա» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:
2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:
3. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:
4. Հայերեն հատուկ անուններն ու եզրերը լատինատառ տառադարձելիս հետևել Library of Congress Romanization Table-ին՝

ա – a	բ – b	գ – g	դ – d	ե – e	զ – z	է – ē	ը – ě	թ – tʻ	ժ – zh
ի – i	լ – l	խ – kh	ծ – ts	կ – k	հ – h	ձ – dz	ղ – gh	ն – ch	մ – m
յ – y	ն – n	շ – sh	ո – o	չ – chʻ	պ – p	ջ – j	ր – r	ս – s	վ – v
տ – t	ր – r	ց – tsʻ	ւ – w	փ – pʻ	ֆ – kʻ	եւ – ew	օ – ò	ֆ – f	

5. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.
 - ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել *շեղատառ* (italic):
 - բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:
 - գ. Շարքերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
 - դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
 - ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ հանաչելի ձևով համառոտել:
 - զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն

հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները:

- է. Սրանց գումարվում է *ՔՄ*-ում ավանդական դարձած **հեղինակի անունը թավ** (bold), իսկ *խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ* (bold + italic) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Դաւիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, բարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները *Ս. Ս. Արեշատյանի*, Երևան, 1960, պրակ Ժէ., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ՝, ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437

Philonis Alexandrini Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca, ed. **F. Petit** (Les oeuvres de Philon d’Alexandrie 33), Paris, 1978

6. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:
7. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրգ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits* (Coulie – 2002), <http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>):

8. Լուսանկարները ներկայացնել հոդվածից առանձին՝ հնարավորինս բարձր որակով:

¹ = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են *ՊՔՀ* = Պատմաբանասիրական հանդես, *ՔՄ* = Բանբեր Մատենադարանի, *ՀԱ* = Հանդես ամսօրեայ, *Լ* = Լրաբեր հասարակական գիտությունների, *ՔԵՀ* = Բանբեր Երևանի համալսարանի, *REArm* = Revue des Études Arméniennes: